



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> *փետրվարի* 2024թ.

N ՄՈ/ 97 - Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի  
N ՄՈ/215-2022 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 2024 թվականի փետրվարի 7-ի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի ապրիլի 6-ի «Գեղեցիկ Ավետիսյանին «Բազարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին» N ՄՈ/215-2022 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված հավելվածի 3.1 կետում «193000 (մեկ հարյուր իննսուներեք հազար)» բառերը փոխարինել «247810 (երկու հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր տասը)» բառերով:

2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:



ՄԱՐԶՊԵՏ

Подписано: KHUDATYAN DAVIT 1308910274

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ